

նայեցայ . մինչև 'ի սուրբ թակոր երկու սահաթ և կէս , կէսն այլ ճանապարհին կանգնիլն կամ սուրբ Եղիշեայ մտանելն սեղէ , թամամ երկու սահաթուան ճամբայ է :

Կը շարունակուի :

## ԴԱՆԻԷԼ ՄԱՆԻՆԻ

ՈՍԿՐՈՏԵԱՑ

ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Անցեալ ամսոյն 24—22ին Ադրիոյ հիսուանծ թագուհւոյն՝ գարէ մը ու կիսէ 'ի վեր մեզի ասպնջական եղող վենետիկոյ մէջ ազգային—կրօնական հանդէս մը կատարուեցաւ , որ համը քաղաքացւոց սրտին մէջ հին հայրենասէր պարհանաց յիշատակներն արթնցուց , վառեց բորբոքեց իրենց երբեմնեան մեծահողի երեակայութիւնը և գոզցես տեսնել տուաւ իրենց յաւէժարդիւն և անմահանուն քաջազանց Բիզանիներու , Մուշիկոններու , Տանտոլոններու և այլն , ուրուակերպ ստուերները յողջոյն իրենց նման առաքինուոյ մը աճինացեալ ոսկրոտեաց բոլորը կայտուել . որ մեծ գործոյ մը հիմն ձգելով , և թէ ոչ 'ի կենդանութեան՝ այլ 'ի մահու յարդիւնս հասած տեսնելով իտալական ազգութեան թագաւորական միութիւնը , իրեն անժխտելի իրաւունքը կը պահանջէր գալու դիւցազուն հարցը ննջարաններուն մէջ հանգչելու : Այս ազգային—կրօնական հանդէս մընէր կատարուածը , որուն արձագանդը կարծենք թէ արդէն ոչինչ ընդհատ Արեւելք ալ հնչեցին . վասն զի երբ կրօնք և Ազգութիւն ձեռք ձեռքի տուած կը գործեն , կարելի բա՞ն է որ սահմանի մէջ փակուին սրտից իրաւացի զգացմունքն , և հաղորդականութեան ամենայն արգելք բառնալով՝ ծովէ 'ի ծով , աշխարհէ աշխարհք , սրտէ 'ի սիրտ

շտարածուին անոնց զարմանալիքն ու գովեստը հոչակելու :

Սրտաշարժ և նախանձելի տեսարան մըն էր արդարեւ յինքեան , և առանձինն մեզի ներկայ գտնուողացս համար , — և որշափ ցանկալի ազգային յիշատակաց զարթուցիչ — տեսնելը գեռ նոր իր երկայնժամանակեայ գերութիւնը թօթափող ժողովուրդ մը իր անշահասէր և զգօնամիտ Ազատարարին դադաղինչորս կողմը խոնեալ անոր առաքինութեանց մեծ յաղթանակը կատարել , և իրեւ թերափ և անզին գրաւական նորանոր յաջողութեանց անոր բազմամեայ հանգուցեալ ոսկրոտիքը իր ծոցն ընդունիւր : Նորօրինակ և սկզբնատիպ աեսարան մըն էր , կ'ըսենք , յորում վոխ առ վոխ տրտմութիւն և ուրախութիւն , զարմանք և ափշութիւն , եռանդն և յուզմունք մէկմէկու կը յաջորդէին , մանաւանդ թէ ըսել յիրար հիւսեալ մէկ և բոլորովին նորերեւոյթ տօնախըմբութիւն մը կը ձևացնէին , ինչպէս հետագայ մանրամասն նկարագրութիւններնէս յայտնի կ'ըլլայ :

Մարտի 24ին երեկոյեան դէմ՝ յետընթացիցը վրայ ողջունելու իտալոյ նոր անկախ եղած ամենայն զիսաւոր քաղաքները , և անոնց մեծարանքն ու պաշտամունքը փոխագարձ ընդունելու՝ հասաւ վենետիկոյ մեծ զիկոտատորին տճիւնը կողակցին և զստերը ոսկերացն հետ մէկտեղ իր հայրենական քաղաքին կայարանը , և մեծաւ ընդունելութեամբ առ վայր մի յատուկ իրեն համար կանգնուած մատուան մէջ ամփոփուեցաւ : Երեկոյեան 6ն էր հանդիսաւոր փոխադրութեան կամ ընդունելութեան համար որոշուած ժամը , որպէս զի յուղարկաւորութիւնը դիշերային մթութեամբ և ջահափայլ պայծառութեամբ խառն՝ աւելի վսեմաշուք կերպարանք մը առնու , և մահու և անմահութեան զգացմունքները աւելի խորհրդաւոր կերպով սրտից մէջ տպաւորէ : Շոգեկառաց կայարանին ծովեղերեայ սանդուղներուն առջեւ , որուն երկու կողմանէ տողեալ այլ և այլ տե-


սակ զօրաց բազմաթիւ գնդեր շարուած էին, ուրիշ անթիւ սևազգեցիկ թաւ շապատ և մետաքսապատ կոնտուլաներու հետ, և յատկապէս պաշտօնակալաց, երեսփոխանաց, պաշտօնէից և նուագածուաց համար պատրաստեալ տիրատեսիլ և փառաւոր նաւակաց հետ՝ առանձինն կը սպասէր պաճուճաղարդ և մեռելական նաւանման կուրմը, որուն 26 մեզը երկայնութեամբ երկու կողիցը վրայ իտալիոյ հարիւր քաղաքաց կնքանշանները (stemmi) թափանցիկ ենթակայից վրայ նկարուած կը փայլէին: Առաջքին կողմը որ հովմէական գալարածոյ ցոկաձնով կ'աւարտէր՝ ծնրադիր առիւծ մը կար 1848ին դրօշակը թաթիցը մէջ բռնած. իսկ խելաց կողմը զոյգ մը արծաթազօծ կանգուն արձաններ՝ որոնցմէ մէկը զլենետիկ կը ներկայացնէր, որ իբրև իտալիոյ մատնանիշ կը ցուցընէր Մանինի դագաղը՝ որուն վրայ կը ծածանէր մահագուշակ դրօշը, այնպիսի ինքնանուէր անձինք փափաքերով հայրենեաց: Չորս պղնձանման մեծամեծ աշտանակներ հովմէական ջահերով սկըսեր էին արդէն իսկ լուսաւորել զնաւակը, մինչդեռ նուիրական լամբարներ ալ դագաղին վրայ մեռելական ազուն նշոյներ կը թափէին, և ամեն կողմանէ ոսկիապատ և արծաթի շռայլեալ զարդերը կ'անդրադարձնէին: Արդէն իսկ՝ գողցես առաւօտեան առջի ժամերէն խոնեալ անթիւ բազմութիւն ժողովրդեան ամենայն ծովեղերաց և ամենայն պատուհանաց առջև, որոնցմէ ամենէն ալ սպանշան օթոցներ ու գորդեր կախուած էին, և յորս բիւրաւոր շոշողուն նիզակաց վրայ ազգային գոյնզգոյն և միանգամայն սևապատ դրօշներ երեկոյեան անուշ սղուսով կը ծածանէին, անհամբերաբար մեծահանգէս յուղարկաւորութեան կը սպասէին, իրարու մէջ շնչելով դիւցազին հազար ու մէկ յիշատակի գործերը, և նոյն ժամանակի գարազլիսին և պատմութեան փառաւոր դրուագները, անակնկալ դէպքերը, առաքինականնաւ-


հատակութիւնները և ողբերգական պատահարները:


Վերջապէս եկաւ հասաւ պայմանեալ ժամը և սկսաւ յուղարկաւորութիւնն ու մահանշան տորմիղը վեհութեամբ մը սահիլ այն ալեծուվի ջրանցքին վրայէն, որ ըստ մեծ հանճարեղի մը խօսքին՝ աշխարհքիս առաջին հոյակապ փողոցն է: Հոս անկարելի է նկարագրել այս գիշերային տեսարանին գեղեցկութիւնը, երկու կողմանէ ժամանակին ամենայն արկածիցը դէմ յաղթող հանգիսացող հսկայարերէ պալատանց ներքին լուսաւորութեամբ հանդիսին ձբեղութեանը վրայ պատճառած առաւելութիւնը, այն տիսուր ներդաշնակութեանց հեռաւոր և բիւրակերպ արձագանգները, երկնքին աստեղուազարդ կամարին վսեմախօս լուսաթիւնը, որ արդարեւ իսկ հրաշանուագրանատեղին ըսածին համեմատ՝ իբրև Աստուծոյ ժմուիցը ամենավճիտ պայծառութիւնը այնպէս կը փայլէր և կը հովանանար իրաւապէս պարծեցող և դագաղի մը չորս կողմը միսիթարեալ ժողովրդեան մը վրայ: և բիւրաւոր կանթեղաց և ջահից դողդոջուննշուկից ուկիապատ գորգոց և ծովուն սարսուասեր ալեաց վրայ բեկբեկիլը, և բովանդակ հանդիսին միաշունչ և անշփոթ յարմարութիւնը:

Այսպէս եկաւ հասաւ յուղարկաւորութիւնը Սլաւոնաց ծովափունքը, ՎԶաքարիա եկեղեցւոյն մօտ. հոն թաղական խորհրդոյ յանձնաժողովը հանդերձ ուրիշ պատուաւոր անձինքներով ընդ առաջ ելան դագաղին և տարին զայն յեկեղեցին որ մշտավառ մատուռ մը գարձած էր, ուր բոլոր գիշերը քաղական զօրաց սպաններ պահպանութիւն պիտի ընէին 'ի պատիւ: իսկ Սլաւոնաց ծովափանց երկայնութեամբ կրկին առաջքով շարուած էին բանակի հետեակ զօրաց և Ազգային պահանորդաց վաշտեր:

Երկրորդ օրը առաւօտանց կանուխ ամբոխիւ լի էին փողոցները, մանաւանդ Ա. Մարկոսայ մեծ ու պղտիկ







Հրապարակները և բովանդակ Սլաւո-  
նաց ծովափոնկը ուսկից որ պիտի  
անցնէր յաղթական յուղարկաւորու-  
թիւնը։ Ա. Մարկոսայ հրապարակին  
մէջտեղը բարձր կայարան մը շինուած  
էր գագաղը հանգչեցնելու համար, եր-  
կու կողմանէ առանձինն բեմերով ա-  
տենախօսից համար։ Ազգունական գըն-  
դերը և Քաղաքական պահանորդները  
քառակուսի ձեռվ կեցած էին մեծ և  
փոքր հրապարակներուն մէջ, ընդար-  
ձակ ասպարէզ մը բանալով յուղար-  
կաւորաց, և միայար գծով կ'երկնային  
նաև ինչուան Ա. Զաքարիա եկեղեցւոյն  
նախադրունքը։ ասոնց հետ գնդեալ  
էին նաև բազմութիւն նաւաստեաց և  
Մ. Բոլց ու Մ. Ֆուգարինի Լիկէոննե-  
ռու և Արուեստական վարժարանին ա-  
շակերտք, որոնք իրենց թեթև ու բա-  
րեձե հագուստներովն ու ծանրակա-  
ցութեամբը հանդէսը աւելի ախորժելի  
կ'ընէին։

Գարնանային պայծառ արև մը լոյս  
ու ջերմութիւն հոսելով ծովալճին ա-  
լեացը վրայ երկնային կապուտերանգ-  
դեղեցիկ գոյնով կը լուր զայն, և ա-  
նոր ապակեղէն մածուածին վրայ ճա-  
ռագայթեցնելով հեռաւոր կղղեակնե-  
րը, առագաստները և նաւուց կայե-  
րը, պանչելի բնութեան նկար մը կը  
ձեռցնէր։

Առաւոտեան ժամը 10 ½ ին հրանօ-  
թոց առաջին թնդիւնները յուղարկա-  
ւորութեան Ա. Զաքարիա եկեղեցւոյն  
նեղ անցքէն դուրս ելլելը ծանուցին.  
որոնցմէ ետքը մէկէն սկսան լսուիլ  
թմբկաց և տիրական պարուց հնչիւն-  
ները։ Զինուորական Երաժշտութեան  
ետևէն կը սկսէր թափօրը յորում ա-  
ռաջին էր Եգուարդ Զէն (Zen) 1848ին  
մարտի 18ին Ա. Մարկոսայ հրապարա-  
կին մէջ առաջին մեռնողին որդին, և ա-  
նոր քովը վինկենտիոս Բրեդիճիաննի  
անունով սոսկական մը, որ առաջիննե-  
րէն մէկը եղեւ էր զՄանին բանտէ ա-  
զատողներուն մէջ։ ասոնց ետևէն կու  
դային ներկայացուցիչը 1848-49ի զի-  
նուորական գնդից, ինչպէս նաև մա-

ցորդք նոյն ժամանակի Քաղաքական  
պահանորդաց, Քաղաքական խնամա-  
կալուաց, Հսկողութեան ընկերութեան,  
երկուց ժողովոց, և Քաղքին անձնատուր  
ըլլալէն ետքը 40 աքսորելոց։ և յու-  
ղարկաւորութեան այս առաջին մասը  
կը վերջանար նոյն ժամանակի քանի  
մը գրօններով որոնք փառաւոր յիշա-  
ակներ էին Մարկէրայի և Կամրջա-  
միջոյն։

Ասոնց ետևէն ծանրագայլ յառաջ  
կ'ընթանար գագաղը բարձեալ քանի  
մը զինուորական զնդից ներկայացու-  
ցիչներէն որ մասնակից եղած էին վե-  
նետիոյ պաշտպանութեանը, որոնց ան-  
միջապէս մօտէն կ'երթար քահանայ  
մը խաչով և կղերիկոսով մը հանդերձ.  
առընթեր էին Հասարակապետութեան  
առ ժամանակեայ կառավարութեան  
անդամները և ջրհանից 24 գործաւոր-  
ներ, որոնք վառ ջահեր կը կրէին ձե-  
ռուընին։ Դագաղին անմիջապէս ետևէն  
կու գային քանի մը սեեր հագած տիկ-  
նայք ամենքն ալ ազգականք մեծա-  
նուն Հանգուցելոյն։ յետոյ օտար բա-  
րեկամք Մանինի։ յետոյ վենետիոյ և  
Վիչէնցայի զրօշակները ոսկեղէն միտա-  
լով պատկեալ, իրենց անկախութեան  
փափաքով ցուցըցած քաջութեանցն հա-  
մար։ յետոյ Արք։ Քաղաքապետը, եր-  
կուց ժողովարանաց ներկայացուցիչնե-  
րը, բազմութիւն ծերակուտի և երես-  
փոխանաց ժողովոյն, Արք։ Դատաստա-  
նարանին նախագահը, Զինուորական  
հրամանատարը, Քաղաքական խնա-  
մակակը, Դեսպանը, Գաւառական և  
Թաղական խորհրդարանք, վենետիոյ՝  
ծենովայէն ու Միլանէն ընծայ ընդու-  
նած զրօնները կրելով։ յետոյ վաճառա-  
կանութեան խորհրդարանը և հետզիե-  
տէ քաղաքացւոց զանազան խումբեր,  
դրեմէ ամենայն իտալական գաւառաց  
քաղաքապետը։ յետոյ ամենայն ու-  
սումնական ժողովոց ինչպէս Արք։ Հա-  
մալարանին բատուայի և վենետիոյ  
Ակադեմիային և այլ ուսումնարանաց  
և այլն, անդամները, ամենայն արհես-  
տաւորաց և գործավարաց ընկերու-

թիւնները, ամենքն ալ իրենց նորածեն և ճարտարահիւս դրօշակներովը, որոնց շատին վրայ իրենց ընկերութեան անուանակոչութենէն դուրս այլ և այլ իմաստալից վերտառութիւններ ալ ուղեգիր կը փալփլէին . յետոյ Արք . ամենայն թանգարանաց, փարժեարից և գործատանց տեսուչք, յետոյ իտալիոյ թագաւորութեան շատ զաւաներէն ժողուած Աղջային պահանորդաց պերճաշուք սպաները և այլն և այլն :

Յուղարկաւորք հասնելով Ս. Մարկոսայ հրապարակը մտան Աղջային պահանորդական գնդից բացած քառակուսոյն մէջ, և դադաղը դրուեցաւ բարձր հանգստարանին վրայ, ուր ելան արձանացան նաև Արք . Քաղաքակետը, Քաղաքական խնամապետը իրեն օգնական գլխաւոր անձինքներով, Վենետիկոյ առ Ժամանակեայ կառավարութեան անդամները, և Բարիղէն Մանկինի դադաղին ընկերացող անուանի գաղղիացիներ, և այլն և այլն : Ան ատեն հրաման տրուեցաւ ճարտասանից որ խօսին և երկու ժամէ աւելի տևեցին ճառախօսութիւնք : Խօսեցաւ նախ Ան . տը Լա Ֆորժ, յետոյ Ռուֆինի փաստաբանը, Հերոլու, Քալուչի փաստաբանը, Լըկուվէ, Ռէնսովիչ փաստաբանը, տը Ֆորքատ<sup>1</sup>, Բրիարիոյ փաստաբանը, Փարվիրովի, Վարէ, Մինոդոյ : Առ ամենայն ճառախօսութիւն բազմաձեռն ծափահարութիւնք կը հընչեցնէին զհրապարակը, թէպէտ և տեղոյն ընդարձակութեանը պատճառաւ անկարելի կ'ըլլար՝ ճառախօսաց լսելի

<sup>1</sup> Տը Ֆորքատ՝ ՀԱՆԴԻԾ ԽՐԿՈՒՑ ԱՇԽԱՐՀԱՅ ՌԵՍՊՈՆՍ ՌԵՍՊՈՆՍ ԱՌԱՋԱԿԱՆ օրագրին անուանի անդամակիցներէն մէկն է և երկար ժամանակէ 'ի վեր հեղմակ Հնգէտառաւորէայ ծանառակագրական գոգուածոց . որոնց մէջ ըլրած խորաքնին, աղատ և հեռատես խորհրդածութիւններովը պատճառախօս կը սեպուի քաղաքագէտն Եւրոպիոյ, զորոնք նաև՝ ինչպէս կ'ըսեն, ամեն անդամ Նաբուշոն Գ, կայսրն ալ մեծաւ մոտագրութեամբ կը կարգայ : Սակայն դժբաղգաբար կը լսենք թէ տաղանդաւոր գրագէտը՝ Մանինի պահանառաւ իտալա ըրած ճամբորգութեան սասաթիկ խանդավառ յուզմունքէն մտաց հիւանդութիւն ունեցած է ու կը յիշարաբանէ :

ըլլալու ամենայն ջանիւքն հանգերձ՝ որ ձայներնին չափաւոր սահմանէ մը աւելի անդին հասնի :

Ժամը 2էն վերջը դադաղը փոխադրուեցաւ Ս. Մարկոսայ եկեղեցին և հանգչեցուցին եկեղեցւոյն մէջտեղբար ձրացուած պանչելակերտ մեռելակիր կազմածին վրայ, որուն չորս կողմանէ 200է աւելի ջահեր վառուած էին, և գիշերն 'ի զլուխ ալ անշէջ պիտի մը նային :

Հոն հանգստեան պաշտամունքը համառօտիւ կատարեց անձամբ քաղաքիս ծիրանաւոր Պատրիարքը, ուր երգը ցուեցաւ նաև մասնաւորապէս այս հանգիսիս համար քաղքիս երևելի Պուցցու լու երգահանին շարադրած եղանակաւոր հանգստեան սաղմոսը :

«Այսպէս լմնցան, կ'ըսէ քաղքիս պաշտօնական լրագրապետը, այս երկու աւուրց հանդիսական արարողութիւնները : Ընդունայն է ըսել թէ ինչ խանդապատանք և ինչ յիշատակներ զարթուցին ժողովրդեան օրտին մէջ : Պատմական դարագլուխ ու շրջան մին էր որ բովանդակ ժողովրդեան մը աչքին առջևին կ'անցնէր, որ մասնակից եղանոյն ժամանակին մէջ այնչափ աղետից, անդրդուելի հաստատամութեան և արիասիրտ անձնանուիրութեան : Շատոնց ակնկալեալ գաղափարի մը յաղթանակն էր, որ 20 տարի առաջ զգացեալ մտաց և ջերմ երևակայութեանց երազ կը սեպուէր :

«Վենետիկի իրեն Հաստարակապետութեան վերջին եղծեալ տարիներուն մէջ փառաւորապէս իրեն նաւահան գիտուր մտնալը տեսաւ այն ցուկանաւուն՝ որ Ավրիկեան ափունքներէ իր վերջին ծովապետին և Ս. Մարկոսայ Առիւծը պատակառելի ընողին դիակը կը բերէր : Անճէլոյ Լմոյի մեծաշուք յուղարկաւորութեամբ պատուեալ ուկորները բովանդակ իտալիայէն յաջորդ մը կ'ակնկալեն՝ որ Թերակղզւոյն ծովային հին փառաց աւանդութիւնները շարունակէ : Այս օրուան օրս այնչափ կրից ժփանաց մէջ, զհայրենիս բաժնող հեր.

ձուածոց պակասաւոր իմաստութեան ժամանակ, որոնք արգել խափանարար են իրեն կատարեալ կանոնաւորութեանը, երանի թէ Դանիէլ Մանինի անմեղապարտ հայրենասիրին աճինացեալ ոսկրուտիրը՝ որ Քավուրի 'ի զլուխ հանած միութեան շարժումը կը դուշակէր, հաշտութեան նոր նիւթ մը և խաղաղութեան առ հաւատչեայ ըլլայ իտալացւոց համար : »

Մենք ալ վերջապէս յօդուածնիս աւարտենք կրկնելով դարձեալ թէ իր-

րե ազգային-կրօնական հանդէս մը այնպէս դիտեցինք եղածը և սքանչացանք . և անշուշտ ենք որ եթէ մաս մը աղատամիտ և աղատակրօն անձինք՝ տեղացիք և եկաւորք՝ իրենց յատուկ գաղափարներովլ կ'ուրախանային, սակայն բազմութեան առ հասարակ կարծիքն ու զգացմունքն էր մեղի պէս Ազգասիրութեան հետ կրօնասիրութեան յաղթանակը կատարել 'ի պատիւ Դանիէլ Մանինի ջերմ սրտին, 'ի ներկայութեան իրեն ցրտացեալ ոսկերցը :

Հ. Գ. ՆԵԶԱՐԵԹՆԱԽ

## ՏԱՂՔ ՅԱՐՈՒՓՆԱՆ

Փառը Քրիստոսի ամենազօր յարութեան :

Մայլն այն իշանէր ի լեռնէն ի Մասեաց,  
եւ ի վերայ նորա աթոռք են կարգեալ,  
եւ ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք,  
եւ ի վերայ նորա բեհեզք ծիրանիք,  
եւ ի վերայ նորա որդի արքայի,  
եւ յաջմէ նորա վեցթեւեան սերովրէքն,  
յահեկէ նորա բազմաշեայ քերովրէքն,  
առաջի նորա մանկունք գեղեցիկ,  
ի գիրկս նոցա խաչն տէրունական,  
ի ձեռին նոցա սաղմոսարան եւ քնար,  
որք երգէին եւ ասէին,  
Փառը Քրիստոսի ամենազօր յարութեան :

Ածեալ են ածեալ զսայլիկն,  
ածեալ են կացուցեալ.  
եւ ահա չշարժէր սայլիկն այն՝  
եւ ահա չխաղայր անիւն այն :  
Եթէ հարիւր բարդ խոլըրձան, վեց կորընկան,  
մին մանուշակ խրձագիզեալ.  
ի Մասեաց յաջ կողմանէն  
սայլիկն ածեալ են կացուցեալ.  
եւ ահա չշարժէր սայլիկն այն,  
եւ ահա չխաղայր անիւն այն :  
Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,  
եւ սամուտիքն ապրիշիմի.  
Գոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ .